ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«10» հոկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-103/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 23.09.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.09.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որը հաստատվել է ընթացակարգի հանձնաժողովի 2016թ. մայիսի 25-ի թիվ 1 որոշմամբ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի հավելված N 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում Ընթացակարգի 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար Պատվիրատուն տարբեր չափաբաժիններով կամ չի ներառել գնման առարկաների ամբողջական նկարագրությունները կամ այդ բնութագրերը ամբողջությամբ չեն նկարագրում ձեռքբերվող ապրանքների հատկանիշները կամ էլ նշված են գնման առարկաների հատկանիշները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք հանգեցրել են գնման գործընթացում «Խաչպար» ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և գնման գործընթացի խտրական հիմունքներով կազմակերպմանը, որի հետևանքով գնման գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ կերպով չի իրականացվել, ինչը հանգեցրել է ոչ համարժեք հատուցմամբ ապրանքների ձեռքբերմանը:

Բացի այդ, առկա են այնպիսի փաստաթղթեր ունենալու պահանջներ, որոնք ընդհանրապես գոյություն չունեն:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուի կողմից հրավերի տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու և այդ մասին սահմանված կարգով հայտարարություն հրապարակելու համար «Խաչպար» ՍՊԸ-ն 2016թ. մայիսի 27-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և ներկայացրել է գրավոր դիմում, իսկ մայիսի 30-ին դիմում է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, սակայն Պատվիրատուն արտահերթ նիստ է հրավիրել, քննել և մերժել է Ընկերության դիմումով ներկայացված պահանջը՝ հիմնավորելով, որ հրավերի փոփոխության անհրաժեշտություն առկա չէ:

Ընկերությունը հայտնել է, որ ***այդ ամենը բազմիցս քննարկվել է ԳԲԽ-72/16, ԳԲԽ-80/16, ԳԲԽ-93/16 և ԳԲԽ-96/16 բողոքները քննող հանձնաժողովների կողմից:***

Ընկերությունը հայտնել է նաև, որ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումների շնորհիվ, ՀՀ պետական բյուջեն միայն թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով

ունենալու է 8343500 /ութ միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ գումարի գերածախս:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները հետևյալն են՝

ա) Ընթացակարգի հրավերի հավելված թիվ 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների համար տեխնիկական և որակական բնութագրերը սյունակում Պատվիրատուի կողմից նշված պահանջները չհիմնավորված խոչընդոտներ են առաջացրել «Խաչպար» ՍՊԸ-ի համար,

բ) գնման գործընթացը կազմակերպվել է խտրական հիմունքներով,

գ) գնումների գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ չի իրականացվել,

դ) Պատվիրատուի կարիքին համապատասխան ապրանքի ձեռքբերումը կատարվել է ոչ համարժեք հատուցմամբ:

Ընկերությունը, բողոքում մեջբերել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 1-ին մասի 2-րդ, 2-րդ մասի 1-ին կետերով սահմանված պահանջները:

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջը, բողոքարկման խորհրդին խնդրել է.

դադարեցնել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական նշանակության ապրանքների և նյութերի» ձեռքբերման նպատակով՝ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարելու մասին 2016թ. մայիսի 25-ի թիվ 1 որոշումը՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, և 53–րդ չափաբաժինների մասով:

«Խաչպար» ՍՊԸ-ն 30.09.2016թ. ներկայացրել է ի լրումն ԳԲԽ-103/16 բողոքի և հայտնել, որ համաձայն «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի» ախտահանող միջոցները դասակարգված են «Քիմիական և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանք» 6-րդ բաժնի «Այլ քիմիական ապրանքներ» 38-րդ խմբի «Ախտահանող միջոցներ» 380894 դիրքում՝ ըստ ենթադիրքերի:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2011թ. ապրիլի 13-ի «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը հաստատելու մասին» թիվ 220-Ն հրամանի՝ «Այլ քիմիական նյութերը» ընդգրկված են «Քիմիական նյութեր» գնման առարկայի անվանումով 1.15 համարը կրող խմբի 15.4 համարի ենթախմբում:

Ուստի ախտահանող միջոցները պետք է ընդգրկված լինեն «Քիմիական նյութեր» անվանումով 15/15 ընթացակարգի հրավերներում, այլ ոչ թե «Բժշկական նշանակության ապրանքների և նյութեր» անվանումը կրող 15/16 ընթացակարգի հրավերներում, ինչպես որ արվել է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի կողմից:

2. **«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքների վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները**

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ***26.09.2016թ. թիվ 08-313 գրությամբ*** «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 23.09.2016թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Ըստ մասնակցի գնման ընթացակարգի 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրերը պարունակում են այնպիսի փաստաթղթեր ունենալու պահանջներ, որոնք ընդհանրապես գոյություն չունեն, ինչպես նաև տարբեր չափաբաժիններով բնութագրերը կամ ամբողջությամբ չեն նկարագրում գնման առարկայի հատկանիշները կամ նշված է գնման առարկայի բաղադրիչի՝ ազդող նյութի անվանումը և անյպիսի կշռաչափեր, որոնք մասնակցի համար հանդիսացել են խտրական և սահմանափակել են մասնակցությունը:

Պատվիրատուն վերոհիշյալի կապակցությամբ նշել է՝

1.Գոյություն չունեցող փաստաթղթերի պահանջ - Հրավերի 51-րդ և 53-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում, առկա է այնպիսի արտահայտություն, որ ապրանքը պետք է ունենա ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրեր: Այս հարցը բազմիցս քննարկվել է նախորդ բողոքներում: Քանի որ 51-րդ և 53-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները դեղամիջոց չէն պարզապես չեն կարող ունենալ ՀՀ ԱՆ գրանցման հավաստագիր: Որևիցէ մի մասնակից, նշված չափաբաժիններին

մասնակցելով չի հանդիպել արգելքի նշված պահանջների մասով, գնահատող հանձնաժողովը դրանք դիտել է, որպես տեխնիկական վրիպակներ և մասնակիցների առաջարկած ապրանքների տեխնիկական բնութագրերը գնահատելիս այդ պարամետրերով մասնակիցների առաջարկերը չի գնահատել և չի մերժել: Նույն ինքը՝ «Խաչպար» ՍՊԸ-ն ԳԲԽ-80/16 բողոքի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է հաղթող տվյալ չափաբաժիններով, սակայն ԳԲԽ-96/16 բողոքի որոշմամբ նրան հաղթող ճանաչելու որոշումը դադարեցվել է:

Ընթացակարգի բոլոր փուլերում և համարժեքությանը վերաբերվող բոլոր գործառույթներում, սկսած գնահատող հանձնաժողովի գնահատումներից մինչև բողոքների ընթացքում համարժեքության քննարկումները, «Խաչպար» ՍՊԸ-ն չի մերժվել վերոնշյալ տեխնիկական վրիպակ հանդիսացող պահանջի չապահովման հիմքով: «Պետք է ունենա ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրեր» բառակապակցությունը ընդհանրապես չի կարելի դիտարկել, որպես խտրական պահանջ, քանի որ այն ոչ մի կերպ չի խոչնդոտել որևէ մասնակցի մասնակցությանը:

Միաժամանակ ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրեր ունենալու պահանջը առկա է հրավերի 51-րդ և 53-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում, իսկ 2-րդ և 50-րդ չափաբաժիններում այդպիսի պահանջ առկա չէ, այն դեպքում երբ բոլոր չորս չափաբաժիններով նախատեսված նյութերը հանդիսանում են ախտահանիչ նյութեր և տվյալ պահանջի մոտեցումը պետք է լինի միանման բոլորի համար: Դա ևս փաստում է այն, որ ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրեր ունենալու պահանջը տեխնիկական վրիպակի արդյունք է, որը ոչ մի կերպ չի խոչընդոտել որևիցէ մի մասնակցի:

2. Գնման առարկայի տեխնիկական հատկանիշների թերի, ինչպես նաև խտրական լինելու մասին - «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված են դեպքեր, երբ պատվիրատուն չկարողանալով լիարժեք նկարագրել գնման առարկան, ստիպված է լինում օգտագործել որոշ հղումներ, դրանց հետ օգտագործելով նաև «Կամ համարժեք» արտահայտությունը: ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18 ընթացակարգում հենց դա է տեղի ունեցել և բնութագրերի թերի լինելը չի հակասում օրենսդրությանը, քանի որ Պատվիրատուն հղում է կատարել ֆիրմային նշանին՝ փորձելով լիարժեք նկարագրել գնման առարկան, և օգտագործել է «Կամ համարժեք» բառակապակցությունը:

Միաժամանակ «Կամ համարժեք» բառակապակցությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի ուղիղ իմաստով չի վերաբերվում ապրանքի որակական և քանակական հատկանիշներին, բաղադրությանը, փաթեթավորմանը և այլ պայմաններին, այլ վերաբերվում է կոնկրետ՝ «Առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին» կատարված հղումներին: Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագրերում ներառվող բաղադրիչները, դրանց քիմիական անվանումները, դրանց չափաբաժինները չեն կարող հանդիսանալ «Կամ համարժեք» իմաստով ցանկացած այլով փոխարինելի, ուստի դրանք հարկավոր են ապրանքի որակի գնահատման համար: Դա փաստում է նաև ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան գրությունը, որով պարզաբանվել են ախտահանիչ նյութերի համարժեքության գնահատման չափանիշները, ուստի այդ չափանիշներից ցանկացածը տնեխնիկական բնութագրում ներառելը չի կարող հանդիսանալ խտրական պահանջ:

Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը»:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն Գնման առարկայի բնութագրերը «պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն «Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա»:

Ելնելով վերը ներկայացված փաստերից Պատվիրատուն գտնում է, որ Մասնակցի բողոքը հիմնավոր չէ և ենթակա չէ բավարարման:

«Նորք Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն Ընկերության կողմից ներկայացրած ի լրումն բողոքի կապակցությամբ ***10.10.2016թ. թիվ 08/333*** գրությամբ հայտնել է, որ Մասնակցի ներկայացրած արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի կոդերը որևէ կերպ չեն կարող հիմք հանդիսանալ ապրանքախմբերի դասակարգման համար ըստ գնումների ընթացակարգերի: Դրա համար գոյություն ունի ՀՀ գնումների մասին օրենսդրություն, որի մասն է կազմում ՀՀ ֆինանսների նախարարի 10 հոկտեմբերի 2013 թվականի թիվ 896-Ն հրամանը:

Հրամանի 2-րդ հավելվածով սահմանված գնումների պլանի լրացման կարգի համաձայն գնումների պլանում գնման առարկային վերագրվում է անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան միջանցիկ կոդը: Գնումների պլանում գնման ձևը լրացնելիս, որպես ապրանքների նախահաշվային գին է ընդունվում անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների խմբերի գումարը: Հրամանի հավելված 5-ով սահմանված են ապրանքներին վերագրվող կոդերը:

Բողոքի առարկա հանդիսացող ապրանքները ախտահանիչ միջոցներ են գնումների միասնական անվանացանկում և դրանք ներառված են «հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ» ընդհանրացված անվանումով՝ 33621641 միջանցիկ կոդով: Այս ապրանքախմբի 2-րդ մակարդակի միջանցիկ կոդը 24-ով չի սկսվում: Քիմիական նյութերը անվանացանկում ներառված են «քիմիական արտադրանք» ընդհանրացված անվանումով՝ 24000000 (24-ով սկսվող) միջանցիկ կոդով, դրա տակ ըստ համապատասխան մակարդակների բացված միջանցիկ կոդերով:

Անվանացանկի ընդհանրացված 33000000 կոդի տակ ներառված են «Բժշկական սարքեր, դեղեր և անձնական հիգիենայի պարագաներ» ապրանքախմբերը և այնտեղ են ներառված համապատասխան կոդերով բժշկական նշանակության բոլոր ապրանքները, անկախ բնույթից:

Եթե մասնակցի մոտեցումը ճիշտ է և ախտահանիչ նյութերն ու լաբորատոր նյութերը պետք է հայտարարվեն նույն ընթացակարգի շրջանակներում, ապա ինչպես հաշվել դրանց խմբի նախահաշվային գինը գնման ձևը ընտրելիս, և ինչու ախտահանիչ միջոցները գնումների միասնական անվանացանկում չեն ներառվել 24000000

ընդհանրացված կոդի ներքո, այլ ներառվել են բժշկական նշանակության ապրանքներին վերագրված 33000000 կոդի ներքո: Դա նշանակում է որ Մասնակցի մեկնաբանությունները գնման ապրանքախմբերի վերաբերյալ խեղաթյուրված են: Հակառակ դեպքում խախտվում է «Գնումների մասի» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի.

1. Գնման առանձին ընթացակարգ անցկացնելուց խուսափելու նպատակով արգելվում է՝

1) գնումը բաժանել առանձին չափաբաժինների՝ բաց կամ սահմանափակ ընթացակարգի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել գնման պայմանագրերով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնումները, որպես մեկ չափաբաժին, եթե դրանք կարող են ներկայացվել գնման նույն ընթացակարգի առանձին չափաբաժիններով:

Ելնելով վերը նշվածներից Պատվիրատուն գտնում է, որ բողոքի ի լրում փաստարկները անհիմն են և բողոքը ենթակա է մերժման:

3. <u>ԳԲԽ-103/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-103/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որը հաստատվել է ընթացակարգի հանձնաժողովի 2016թ. մայիսի 25-ի թիվ 1 որոշմամբ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընկերության կողմից ***30.09.2016թ., ներկայացվել է ի լրումն ԳԲԽ-103/16 բողոքի,*** որով Ընկերությունը հայտնել է, որ ախտահանող միջոցները պետք է ընդգրկված լինեն «Քիմիական նյութեր» անվանումով 15/15 ընթացակարգի հրավերներում, այլ ոչ թե «Բժշկական նշանակության ապրանքների և նյութեր»

անվանումը կրող 15/16 ընթացակարգի հրավերներում, ինչպես որ արվել է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի կողմից:

3. «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական նշանակության ապրանքների և նյութերի» ձեռքբերման նպատակով՝ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարելու մասին 2016թ. մայիսի 25-ի թիվ 1 որոշումը՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, և 53–րդ չափաբաժինների մասով:

4. Պատվիրատուի կողմից ***10.10.2016թ. թիվ 08/33 գրությամբ*** ի լրումն Ընկերության ներկայացրած բողոքի ներկայացվել է դիրքորոշում, որով հայտնել է, որ Անվանացանկի ընդհանրացված 33000000 կոդի տակ ներառված են «Բժշկական սարքեր, դեղեր և անձնական հիգիենայի պարագաներ» ապրանքախմբերը և այնտեղ են ներառված համապատասխան կոդերով բժշկական նշանակության բոլոր ապրանքները, անկախ բնույթից:

4. <u>ԳԲԽ-103/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 23.09.2016թ. ներկայացրած բողոքը և ի լրումն բողոքի 30.09.2016թ. ներկայացված գրությունը, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 26.09.2016թ. թիվ 08-313 և 10.10.2016թ. թիվ 08/333 գրությունները, Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա, այն է՝ ***գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային***, թափանցիկ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***:

Օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ լիազորված մարմինը հաստատում է շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը:

Այսպիսով, Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը ***չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, ինչպես նաև պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.***

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի գնման առարկայի 1.16-րդ համարով սահմանված է «Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ» հանդիսացող ապրանքների ցանկը:

Ընկերությունը 23.09.2016թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2011թ. ապրիլի 13-ի «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը հաստատելու մասին» թիվ 220-Ն հրամանի՝ «Այլ քիմիական նյութերը» ընդգրկված են «Քիմիական նյութեր» գնման առարկայի անվանումով 1.15 համարը կրող խմբի 15.4 համարի ենթախմբում:

Ուստի ախտահանող միջոցները պետք է ընդգրկված լինեն «Քիմիական նյութեր» անվանումով 15/15 ընթացակարգի հրավերներում, այլ ոչ թե «Բժշկական նշանակության

ապրանքների և նյութեր» անվանումը կրող 15/16 ընթացակարգի հրավերներում, ինչպես որ արվել է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի կողմից:

Այսպիսով, Կենտրոնի կողմից բողոքի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Պատվիրատուի կողմից բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքատեսակները, որոնք հանդիսանում են ախտահանիչ միջոցներ, ներառված չեն ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի գնման առարկայի 1.16-րդ համարով սահմանված «Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ» խմբում (**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 ծածկագրով**), ինչը կարող է հանգեցնել մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանն ու սահմանափակել մասնակիցների մասնակցության իրավունքը: Ընթացակարգի 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքատեսակները պետք է ընդգրկված լինեին Ցանկի 1.15-րդ համարով սահմանված «Քիմիական նյութեր» խմբի (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով) «Այլ քիմիական նյութեր» ենթախմբում:

Կենտրոնը գտնում է, որ որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքն այս հիմքով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝ դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք «Խաչպար» ՍՊԸ-ի 23.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական նշանակության ապրանքների և նյութերի» ձեռքբերման նպատակով՝ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարելու մասին 2016թ. մայիսի 25-ի թիվ 1 որոշումը՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53–րդ չափաբաժինների մասով:

Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-103/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Գևորգյան